

Արձանագրություն թիվ 5

Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի. թիվ 5
նիստից, կայացած 2023թ հոկտեմբերի 30-ին

Օրակարգում՝

1. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահի հաշվետվությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Քիմիայի ֆակուլտետի դեկան Ս. Վ. Ղոչիկյան - գիտական խորհրդի ներկայացված հաստատված է. ունենք գիտական խորհրդի երկու նոր անդամներ՝ Գոհար Շահինյան և ուսանողներից Էմիլիա Երիցյան: Գիտական խորհրդի 16 անդամներից ներկայացված է 15-ը:

Ներկայացնեմ այսօրվա օրակարգը: Օրակարգի հետ կապված ավելացնում եմ, կամ առաջարկներ կան: Չկան

Առաջարկ կա հաստատել օրակարգը և սկսել աշխատանքը:

Ըստ օրակարգի պետք է լսենք ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Կ. Ռ. Գրիգորյանին (հաշվետվությունը կցվում է)

Քիմիայի ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահ Կ.Ռ. Գրիգորյանի

2022-2023թթ. ուստարվատարեկան հաշվետվությունը

Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել մեթոդական խորհրդի 6 նիստ:

Նիստերին քննարկվել են հետևյալ հարցերը.

- Դիժնի համալսարանի առաջարկությունը «Քիմիա» մագիստրոսական ծրագրի շրջանակներում

համատեղ ծրագրերի և կրկնող/կրկնակի դիպլոմատան ավարտում և մասին հարցը: Ընդունվել է ի գիտություն և

առաջարկվել զբաղվել ծրագրերի հնարավոր համապատասխանեցմամբ:

- «Քիմիա» մասնագիտություն քակված և մագիստրատուրայի առարկայական ծրագրերի

թարմացում և վերանայում: Որոշվել է տվյալ դասընթացի առարկայական ծրագրերը համաձայնացնել այն

ֆակուլտետի հետ, որտեղ իրականացվելու է տվյալ դասընթացը:

- Քիմիայի ֆակուլտետում քակված և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական

գործընթացի կազմակերպման կարգի վերաբերյալ: Ներկայացվել է համապատասխան զեկուլացիոն

Ռ. Բ. Բուդաշյանին:

-2022/2023թթ. ուսումնական տարվա առաջին կիսամյակին անցկացված ուսանողներին

դասախոսներին մասին հարցումներին քննարկումը: Հարցը քննարկվել է ֆակուլտետի դեկանի, անօրգանական

և օրգանական քիմիայի ամբիոններին վարիչներին հետ, հատկապես հատուկ կարծիքները՝ հաշվի առնելով

հարցի նրբանկատությունը այստեղ քննարկան առարկաչէ: Ձեռք են առնվել համապատասխան

մոտեցումներ:

- «Քիմիա» և «Մենդիան վտանգություն և» մասնագիտություն պրակտիկաների

մշտադիտարկումներին արդյունքներին քննարկումը: Ի գիտություն և է ընդունվել պրակտիկայի անցկացման

վայրերի՝ գիտահետազոտական ինստիտուտներին և պետական ու ոչ պետական հիմնարկներին ցանկը, և

առաջարկվել է փնտրել նոր գործընկերներ և թարմացնել ցանկը:

- 2022/2023թթ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակին անցկացված ուսանողներին

դասախոսներին մասին հարցումներին քննարկումը: Հաշվի են առնվել համապատասխան

կարծիքները:

Զեկուցողին ուղղեցին հարցեր.

1. Ռ. Պ. Մխիթարյան - մեթոդական խորհրդի նիստում քննարկում է՞ք «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիալական արդյունքները:

- Կ. Գրիգորյան - Այն քննարկում ենք: Սակայն այն գնահատականները, որոնք հիմնված են միայն մեկ ուսանողի կարծիքների վրա, հաշվի չեն առնվում, դա վերաբերվում է ինչպես գերազանց, այնպես էլ բացասական գնահատականներին: Եթե կուրսը 16-18 ուսանողից է և հարցմանը մասնակցել է միայն մեկ ուսանող, ապա այդ տվյալը հավաստի չի կարող լինել՝ վստահ՝, հավաստի չէ:

Ու Խ նախագահ Ա. Նիգարյան - Իսկ ինչ մոտեցումներ ենք կիրառում այն դասախոսներին կատմամբ, ովքեր մի քանի հարցման արդյունքներում գրանցում են միևնույն ցածր գնահատական:

- Կ. Ռ. Գրիգորյան - նման դեպքերը քննարկվում են ավելի նեղ տարբերակով՝ այն է դեկան, ամբիոնի վարիչ, մեթոդական խորհրդի նախագահ և տվյալ դասախոսը:

Ա. Նիգարյան - Դեկանատին նիստերում:

Տ. Վ. Ղոչիկյան - Քիմիայի ֆակուլտետի օրինակելի կանոնակարգում դեկանատի օղակը բացակայում է: Հարցման արդյունքներով

Ֆակուլտետի երկու դասախոս արդեն ոչ մեկ անգամ ուսանողներին կողմից գնահատվել են շատ ցածր: Համապատասխան ամբիոններին վարիչներին և քիմիա բաժնի կրթական ծրագրի ղեկավարին հանձնարարված է դասախոսներին հետփորձել շտկել բացթողնումները: Այդ հարցին կանդիդատնանք մի փոքր ավելի ուշ, երբ կունենանք որոշակի տվյալներ:

Տ. Վ. Ղոչիկյան - Դուք Ձեր ելույթում ներկայացրեցիք կարևոր մի քննարկում՝ Դյուրոսի համալսարանի հետ՝ երկկողմանի և համատեղ դիպլոմի ստացման վերաբերյալ:

Կ. Ռ. Գրիգորյան - Այո: Սակայն այդ հարցը մնաց միայն քննարկման փուլում: Ոչ մի հետարձագանք չստացանք:

Լ. Ս. Գաբրիելյան - Քիմիա բաժնի բակալավրի կրթական ծրագրի ղեկավար: - Մեր կողմից կատարվել է որոշակի աշխատանքներ: Այդ համալսարանի ներկայացուցիչներին մի քանի անգամ խնդրեցինք առցանց, zoom հարթակում հանդիպում, որպեսզի հասկանանք ինչ ծրագրային փոփոխություններ կարող ենք իրականացնել, սակայն ոչ մի արձագանք չենք ստացել:

Ընթացիկ հարցեր

Տ. Վ. Ղոչիկյան - Դուք գիտե՞ք, որ գիտական խորհրդում պետք է քննարկվեն ինչպես ուսումնական գործընթացին վերաբերվող հարցեր, այնպես էլ ֆակուլտետում իրականացվող գիտական գործունեությունը՝ քանի որ քիմիական հետազոտություններին կենտրոնը առանձին խորհուրդ չունի: Մենք նման փորձ արդեն ունենք և բավականին հաջողված փորձ է: Այսօր մենք ունենք տարբեր կուրսերի ուսանողներ, ովքեր չկորցնելով ժամանակ աշխատում են լաբորատորիաներում, կան արդեն լուրջ փորձարարական տվյալներ որոնք արժանի են տպագրվելու Q1 ամսագրերում, 2,3 տարի ճանաչվել են հանրապետության լավագույն ուսանող: Այս ամենը ասում է այն մասին, որ մեր մտավախությունները ապագայի վերաբերյալ այնքան

Էլ տեղի ն չէին: Վաղվա փոխարինողներ կան և ֆակուլտետը կշարունակի աշխատել իր լավագույն տրադիցիաներին հարագատման վրա: Այդիսկ պատճառով առաջարկում եմ ամբիոնի վարիչներին ներկայացնել 2-ական գիտական աշխատանք, գույուցումների համար, սակայն այնպիսի աշխատանքներ որոնք իսկապես ձեռքբերումներ լինեն տվյալ ժամանակահատվածի համար: Կարող են ներկայացնել նաև աշխատանքներ որտեղ ներառված են լավագույն ուսանողները: Ելույթները պետք է լինեն 30 րոպեի սահմաններում:

Դեկանի նման առաջարկությունը ընդունվեց միաձայն:

Քիմիայի ֆակուլտետի
գիտական խորհրդի նախագահ

S. Վ. Ղուչիկյան

Քիմիայի ֆակուլտետի
գիտական խորհրդի քարտուղար

Մ. Ա. Սամվելյան